

ՀՀ ՓԱՍՏԱՔԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿԱՅՔՈՒՄ ՍՏԵՂԾՎԵԼ Է ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՑ ՍՍԱՑՎԱԾ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԲԱԺԻՆ

19.03.2019 15:37

Հարգելի փաստաբաններ,

ՀՀ փաստաբանների պալատի կայքում ստեղծվել է «**ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ**» բաժինը, որը նախատեսված է փաստաբանների (փաստաբանական գրասենյակների), ՀՀ փաստաբանների պալատի, հարցումների (դիմումների) հիման վրա պետական և տեղական ինքնակառավարման իրավասու մարմինների կողմից տարբեր իրավական հարցերի (իրավական նորմերի) վերաբերյալ տրված պաշտոնական պարզաբանումները հրապարակելու և փաստաբաններին հասանելի դարձնելու համար:

«ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ» բաժնում Ձեր տիրապետման տակ եղած հարցումը և պարզաբանումը հրապարակելու համար անհրաժեշտ է՝

1. Հարցման (դիմումի) և դրա վերաբերյալ ստացված պարզաբանման փաստաթղթի՝ **բնօրինակից** պատշաճ որակի սկանավորված էլեկտրոնայի ֆայլն ուղարկել **info@advocates.am** էլեկտրոնային փոստի հասցեին:

2. Փաստաթուղթը (և՛ հարցումը, և՛ պարզաբանումը) պետք է սկանավորված լինի հետևյալ չափանիշներով.

- ֆայլի ձևաչափը՝ **PDF.**
- փաստաթղթի չափը՝ **A4.**
- սկանավորման տեսակը՝ **գուՆավոր.**
- սկանավորման խտությունը (**resolution**)՝ **առնվազն 200 dpi.**

3. Նշված բաժնում հարցման և պարզաբանման օրինակները հրապարակվելու են ամբողջությամբ՝ հարցման և պարզաբանման մեջ արտացոլված փաստաբանին, ինչպես նաև գործին վերաբերող անձնական տվյալներով: Փաստաբանին կամ կոնկրետ գործին վերաբերող անձնական տվյալները (օրինակ՝ փաստաբանի հասցեն, հեռախոսահամարը, գործի համարը, վստահորդին անհատականացնող տվյալները (անուն (անվանում), հասցե, հեռախոսահամար և այլն) չհրապարակելու ցանկության դեպքում փաստաբանը պետք է հարցման և պարզաբանման օրինակը ՀՀ փաստաբանների պալատի տրամադրելիս՝ այդ մասին կատարի հատուկ նշում՝ հստակեցնելով այն տվյալները, որոնք նա չի ցանկանում հրապարակել կամ հարցումը և պարզաբանումը տրամադրել հանելով (փակելով) հրապարակման ոչ ենթակա տվյալները:

```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```